

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. հունիսի 1-ի

նիստի /արձանագրություն N 18/

1. 2017թ. ընդունելության գործընթացի առաջին փուլի արդյունքների մասին պատասխանատու քարտուղար Գ. Ստեփանյանի հաղորդումն ընդունելի գիտություն:
 - 1.1 2017թ. ընդունելության գործընթացի բարելավման նպատակով հանձնարարել պատասխանատու քարտուղար Գ. Ստեփանյանին`
 - 1.1.1 տեխնիկական անձնակազմի միջոցով դիմորդների էլեկտրոնային փոստին ուղարկել ընդունելության մասնագիտական ծրագրերը և գնահատման չափանիշները,
 - 1.1.2 առարկայական քննական հանձնաժողովներին տրամադրել 2017թ. ընդունելության ծրագրերը և գնահատման չափանիշները,
 - 1.2 հանձնարարել Հ. Ավագյանին և Վ. Եղիազարյանին շուտափույթ կազմակերպել 2017թ. ընդունելության ծրագրերի և գնահատման չափանիշների տպագրությունը բրոշյուրի ձևով` 100 օրինակ խմբաքանակով,
 - 1.3 հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին մինչև ս.թ. հունիսի 6-ը ռեկտորատի հաստատմանը ներկայացնել 2016-2017 ուս. տարվա առաջին կուրսերի ղեկավարների թեկնածությունները,
 - 1.4 ընդունելության քննությունների ընթացքում մուտքն ինստիտուտ թույլատրել միայն հատուկ անցատոմսերով, հանձնարարել անվտանգության աշխատակազմին այդ օրերին ելումուտը գրանցել մատյանում,
 - 1.5 ընդունելության քննությունների արդյունքների և բողոքարկումների վերաբերյալ բոլոր տվյալները փակցնել բակում տեղադրված ստենդների վրա,
 - 1.6 հանձնարարել բուֆետի աշխատակիցներին ընդունելության քննության օրերին սպասարկումը կազմակերպել նաև բակում:
 - 1.7 հանձնարարել ինստիտուտի տնտեսվարին` հետևելու ջրի մատակարարման ժամանակացույցին և նախապես միջոցներ ձեռնարկել:
2. Հանձնարարել Ն. Սարգսյանին և Գ. Հովհաննիսյանին պատրաստել հիմնավոր նամակ ավարտական ատեստացիոն քննաշրջանում ուսանողների բողոքարկումների

գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ ի պատասխան ՀՀ ԱԾ-ից ստացված 26.05.2016թ. ԳԿՄ-Կ-92 նամակի:

2.1 Հանձնարարել Հ. Ավագյանին վերահսկել ինստիտուտում թղթավարության կազմակերպման աշխատանքները:

3. Հավանություն տալ և հաստատել ամռան ամիսներին նախատեսվող վերանորոգման աշխատանքների նախագիծը,

4. հանձնարարել ուսխորհրդին առաջիկա օրերին ուսանողների միջոցով կազմակերպել նկուղային հարկի մաքրման աշխատանքները՝ առաջիկայում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով,

4.1 ինստիտուտի աշխատակիցների հոբելյանները նշել՝ սկսած 60 ամյակից, առաջիկայում մշակել և սահմանել խրախուսման եղանակները:

4.2 Մազիստրատուրայի 2016-2017 ուս. տարվա ընդունելության I փուլի մրցույթի անցկացման նպատակով ընդունող հանձնաժողովի նիստը նշանակել ս.թ. հունիսի 10-ին:

Գլխավոր տնօրեն

Գ. Հովհաննիսյան